ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը՝ ՀՀ Ազգային անվտանգության մարմինների աշխատողի օրվա կապակցությամբ.

Ազգային անվտանգության մարմինների հարգելի՛ աշխատակիցներ,

ի սրտե շնորհավորում եմ ձեզ՝ ձեր մասնագիտական տոնի՝ Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության մարմինների աշխատողի օրվա կապակցությամբ:

Ձեր ծառայությունը մեր հայրենիքի անվտանգության և կայունության ամուր երաշխիքն է: Ձեր անխոնջ աշխատանքն ու անձնվիրությունը անկյունաքարային նշանակություն ունեն պետականության ամրապնդման, քաղաքացիների խաղաղ կյանքի ապահովման և ազգային շահերի պաշտպանության գործում:

Շատ բարձր եմ գնահատում ձեր դերը, մասնագիտական պատրաստվածությունը և պատասխանատվությունը, որոնք անչափ կարևոր են՝ ներքին ու արտաքին սպառնալիքներին դիմակայելու համար:

Մաղթում եմ ձեզ անսպառ ուժ, կամք և հաջողություններ՝ ձեր պատասխանատու առաքելության մեջ: Թո՛ղ ձեր ծառայությունն ընթանա մի՛շտ խաղաղ և ապահով պայմաններում, իսկ ձեր ընտանիքները միշտ շրջապատված լինեն ջերմությամբ ու բարօրությամբ:

Հարգանքով՝

ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար

Հովհաննես Հովեյան